Արուճի կամ Թալիշի խոյակի վերայ,* նմանը ունինք եւ Եղիպտոսում,‡ Թալինի մի պատուանդանի վերայ՝ քառանկիւնի շրջանակի մէջ պատկ. 84.— Եռագիծ բոլորակի մէջ պատկ. 14 Աւանում Արագածի եւն.:†

Ի վերջոյ պիտի յիշենք երկու վայրերի մնացորդներն եւս, որոնք ձեւով քիչ տարբեր են, բայց կարծում ենք կապուած դերեզմանական կոթողների հետ եւ ոչ չէնքի սիւներ: Դոցանից մէկը գտնւում է Օշականում, ուր Վահան Ամատունին Ե. դարի քառասնական թուականներին Ս. Մեսրոպի դերեզմանի վերայ չինեց մի եկեղեցի, որի յատակագծից եւ Կուսիկեանի նկարից դատելով, բազիլիկայ էր: Այդ թանկագին մնացորդը խարխլուած լինելով, իսպառ քանդուեցաւ Գէորգ Դ. կաթուղիկոսի կողմից եւ նոր, ճարտարապետական տեսակէտով անարժէք եկեղեցի շինուեցաւ: Այդտեղ գտնւում է մի կոթող, ութ անկիւնանի բունի վերայ՝ խոյակով վերջացած, Զուարթնոցի խոյակները յիշեցնող ոճով, որ կարծում ենք դերեզմանական կոթող էր:

Նման կոթողների մնացորդներ ենք համարում եւ հանդուցեալ Խաչիկ վարդապետի պեղումներով Դուինում երեւան եկած պատուանդանները, դարձեալ Զուարթնոցի խոյակները յիշեցնող: Արդեօ՞ք ըստ Յովհաննէս կաթուղիկոսի տուած տեղեկութեան Ներսէս Գ.-ի (641–661) շինած եկեղեցու մնացո՞րդ, թէ աւելի հին: Այս պատուանդաններից մէկի վերայ քանդակուած է մի խաչ, դարձեալ թեւերի վերայ մի մի գնդակ, իսկ հորիզոնական թեւերի վերայ դէմ առ դէմ մի մի թռչուն, ինչպէս քիչ վերեւ մատնանշուեցաւ:* Իսկ խոյակաձեւ մնացորդների վերայ նկատւում են Կողբի եւ Բրդաձորի բեկորների եւ խոյակների նման զարդեր, ինչպէս բարձր ցողունի վերայ ծաղիկ եւ հասկաձեւ քանդակ, ասել է միեւնոյն դեղարուեստական հոսանքի ապացոյց:

ԺԳ.

Նախընթաց գլուխների մէջ առիթ ունեցանք ուրիշ սուրբերի պատկերագրութիւնից աւելի Աստուածածնի պատկերագրութեան հանդիպելու:

Քրիստոնէական արուեստի մէջ Մարիամի պատկերագրութիւնը երեւան է գալիս Բ. եւ Գ. դարերում Հռոմի կատակոմբաների որմանկարչութեան մէջ:* Եփեսոսի 431 թուի ժողովից յետոյ, բնականաբար, երբ Մարիամի համար Թէոտոկոս–աստուածածին արտայայտութիւնը հաստատուեցաւ պաշտօնապէս, իբրեւ մաս վարդապետութեան (Dogma), առաւել զարկ պիտի ստանար նորա պատկերագրութիւնը արուեստի մէջ:

Ռուս երկու նշանաւոր գիտնականներ, Կոնդակով եւ Լիխաչեւ ընդարձակ մենագրութիւններ ունին Աստուածածնի պատկերագրութեան ծագման ու զարգացման պատմութեան նուիրուած.** Նոքա ցուցումներ են տալիս, յատկապէս Կոնդակովը, որ Բիւզանդական նուիրական Օդիգիտրիայի տիպի Աստուածածինների նախնական ծագումը պէտք է որոնել արեւելքի՝ այսինքն ասորա-կոպտական արուեստի մէջ, որ յետոյ Բիւզանդիայում բարձր զարգացման հասաւ եւ ապա անցաւ արեւմուտք, իտալական Նախավերածնութեան (Vorrenaissance) եւ Վերածնութեան մադոննաների նախակարապետ եւ զարգացման զարկ տալու:

Ինչ որ Ռուս գիտնականները միայն կռահելով են յայտնում, Հայաստանի դերեզմանական կոթողների պատկերագրութիւնը հաստատում է որպէս իրողութիւն, հնագոյն դարերի մնացորդներով: Մենք փաստեր եւ

---

*Strz. Die Baukunst. եր. 411: Պատկ. 439, 440, 441:

‡Die Koptishe Kunst. եր. 63. Դ.–Ե. դարի գործ:

†Անդ. եր 100, եւ Պատկ. 153: 8751, Քրիստոսի 600 թուականի գործ:

*Պատկերները տես Strz. Die Baukunst. եր. 320–321, պատկ. 361 եւ 363: Պատկ. 361 պէտք է համեմատել մեր Պատկ. 51, 53 եւ 59-ի հետ, մեծութիւններն էլ մօտաւորապէս նոյն չափով:

*Burckhardt. Die Zeit Constantins des Grossen. Պատկեր 55, 56:

**Kondakoff. Ikonographia Bogomateri 1914 և 1915. SP.: Lickhastchew. Isobrajenia Bogomateri. SP. 1911.